ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ՀԻՄՔԵՐԻՆ

Ազգանունը, ինչպես անձնանունը կամ տեղանունն այն գլխավոր միջոցն է, որով միակը տարբերվում է ընդհանուրից: Տարբեր ժողովուրդներ, ելնելով իրենց ազգային եւ լեզվական առանձնահատկություններից, տարբեր մոտեցում են տվել ազգանվանը: Օրինակ՝ քանի որ չինացիների բառերը շատ կարճ են, նրանց ազգանուններն էլ կարճ են, հիմնականում՝ միավանկ, ինչպես՝ Չան, Լի, Սուն, Շի: Ռուսերենում թեեւ կամ ազգանուններ, որ արմատական բառեր են, ինչպես՝ Заяц, Лиса, Волк, սակայն առավել օրինաչափ են ածանցավոր կազմությունները: Ռուսերենի ազգանվանակերտ ածանցներն են – ов//-ев (Волков, Иванов, Зайцев. Камышев) –ин//-ын (Галкин Капустын): Ռուսերենի ազգանուններն ունեն բառակազմական հետեւյալ առանձնահատկությունը. կնոջ ազգանվանը ավելանում է а վերջավորությունը, որը կցվում է ազգանվանակերտ ածանցին (Волкова, Зайцева, Галкина եւ այլն):

Հին հայերենում ազգանունները ձեւավորվում էին – ունի մասնիկով, ինչպես՝ Սոշանունի. Ամատունի. Բգնունի. Ռշտունի. ավելի ուշ՝ պարսկերենից փոխառված -եան (-յան) վերջածանցով (Մուշեղեան, Հմայակեան, Մանուէլեան եւ այլն):

Ժամանակակից հայերենի ազգանունները, բաղադրյալ (բառակազմորեն վերլուծելի) կազմություններ են, որոնք սերում են «ազգանվանակերտ հիմք + ազգանվանակերտ ածանց»[1] կաղապարով: Որպես ազգանվանակերտ ածանց են դիտվում –յան//ան. -ունի. -ենց. -ունց. -անց. -ացի. -եցի. -ցի. -ց բաղադրիչները, որոնցից առավել գործածականը -յան ձեւույթն է:

Հայերենի ազգանվանակերտ հիմքերի մի ստվար խումբը փոխառյալ է, այսինքն հայերենին է փոխանցվել պարսկերենից, արաբերենից, թուրքերենից եւ այլ լեզուներից: Շրջանցելով նմանատիպ կազմությունները՝ անդրադառնանք բուն հայերեն ազգանվանակերտ հիմքերով կազմված ազգանուններին: Սրանք կարող ենք բաժանել երեք խմբի.

1. անձնանուններից առաջացած ազգանվանակերտ հիմքեր,
2. տեղանուններից առաջացած ազգանվանակերտ հիմքեր,
3. հասարակ անուններից առաջացած ազգանվանակերտ հիմքեր:

[1] Տ.Ավետիսյան, «Հայկական ազգանուն», Ե., 1987թ., 223 էջ:

1. Անձնանուններից առաջացած ազգանվանակերտ հիմքերը հայերենում հիմնականում արական անձնանուններ են, ինչպես՝ Յովհաննիսյան, Թոռոսյան, Գեղամյան, Արմենակյան, Արամյան, Արտաշեսյան եւ այլն: Սակայն հանդիպում են նաեւ իգական անձնանուններով կազմված ազգանուններ, ինչպես՝ Շուշանյան, Մանանյան եւ այլն:

Այս խմբի ազգանունների կաղապարն է անձնանուն + յան վերջածանց:

2. Հայերենում քիչ չեն նաեւ տեղանուններից առաջացած ազգանվանակերտ հիմքերը:

Հայկական ազգանուններում տեղանունների կիրառությունը երկար պատմություն ունի: Դեռեւս IVդ-ում թե՛ բարձր դասը եւ թե՛ հոգեւորականությունը անձնանվանը զուգահեռ դնում էին այն տեղանունը, որտեղ ծնվել էին, բնակվում էին եւ կամ կրթություն էին ստացել, օրինակ՝ Ղեւոնդ Վանանդեցի, Մովսես Խորենացի, Սարգիս Տայեցի, Մխիթար Մեծոփեցի, Կոստանդին Երզնկացի եւ այլն:

Տեղանվանական հիմքով են ձեւավորված նաեւ այն ազգանունները, որոնք կազմված են տեղանուն + յան կաղապարով, ինչպես՝ Երեւանյան, Խարբերդյան, Վանյան:

Այսպիսով, տեղանվանական հիմքով ազգանուններում կենսունակ են հետեւյալ կաղապարները՝ տեղանուն + -ացի, -եցի, -ցի, -ց, -յան ազգանվանակերտ ածանց:

3. Հայկական ազգանուններում տարածված են նաեւ հասարակ անուններից փոխանցված ազգանվանակերտ հիմքերը: Առանձնացնում են ազգանվանակերտ հիմքեր դարձած հետեւյալ բառախմբերը. «արհեստավոր, զբաղմունք» իմաստով ազգանվանակերտ հիմքեր», «պաշտոն, աստիճան իմաստով ազգանվանական հիմքեր», «մականվանական հիմքեր»:[2] Ստորեւ սրանց կանդրադառնանք ավելի մանրամասն՝ միաժամանակ նշելով, որ կան մի շարք այլ իմաստներ ունեցող հասարակ գոյականներ էլ, որոնք մասնակցում են ազգանվանական հիմքերի ձեւավորմանը: Այդ գոյականները խմբավորել ենք ըստ իմաստային ընդհանրությունների:

1. Արհեստ, զբաղմունք, պաշտոն նշող գոյականներով են կազմված այն ազգանունները, որոնց ազգանվանակերտ հիմքերն արտացոլում են մարդկային գործունեության տարբեր ոլորտներ: Այս դեպքում ազգանունը ներկայանում է արհեստ, զբաղմունք գույն տվող գոյական + -ճի (-չի, -ջի) փոխառյալ եւ -գործ, -արար, -կոփ, -տաշ, -իչ, -պատ, -կար, -որդ, -թուխ, -պան, -իկ ածանց կամ

[2] Տ. Ավետիսյան, Հայկական Ազգանուն, Եր.:

ածանցակերպ + յան ազգանվանակերտ ածանց կաղապարով: Օրինակ՝ Սանրազործյան, Նեռնարարյան, Քարանոփյան, Քարտաշյան, Փայտահատյան, Սափրիչյան, Յազբուխյան, Ջարագայանյան, Կոշկակարյան, Ծոցինյան եւ այլն:

Այս կաղապարը կարող ենք ներկայացնել նաեւ արհեստի անվանում + գործող անձ-հիմքաստով ածանց + ազգանվանակերտ ածանց ձեւով:

2. Պաշտոնանուն հիմքով են կազմված Վարժապետյան, Մաքսապետյան, Տանապետյան, Մայրապետյան, Աթոռակալյան, Սարկավագյան, Տերտերյան, Դպիրյան եւ այլ ազգանուններ:

3. Բնության երեւույթներ, առարկաներ նշող հասարակ գոյականներով են կազմված Արեւյան, Արեւիկյան, Լուսինյան, Արշալույսյան, Լույսյան, Մորինյան, Ափյան, Ծովյան, Անուշյան եւ այլ ազգանուններ:

4. Բուսանուն գոյականներով են կազմված Բամբակյան, Ծաղիկյան, Ծառունյան, Ծառատանյան, Սեխյան, Խնձորյան, Նարինջյան, Մասուրյան, Տանձինյան, Կոռնոտյան, Կորեկյան, Ձավարյան, Սիսեռյան, Սխտորյան, Դանդուռյան, Ցորունյան, Պտուղյան ազգանունները:

5. Ազգանվանական հիմքեր կարող են դառնալ թռչնանուն գոյականները, ինչպես՝ Լորիկյան, Կաքավյան, Սիրամարգյան, Արծիվյան, Բազեյան եւ այլն:

6. Ազգակցական կապեր նշող գոյականներ, ինչպես՝ Պապիկյան, Յայրիկյան, Թոռիկյան, Քեռիյան:

7. Այլիմաստ հասարակ գոյականներ, ինչպես՝ Կտավյան, Կտավյան, Քարաջյան, Փայտյան, Տոնիկյան, Սորգյան, Ոսկանյան, Խաչեյան, Խաչերյան, Խաչերեսյան, Թաթիկյան, Թագավորյան, Ծամերյան, Դարպասյան, Դերյան, Դուռունյան, Թանապուրյան եւ այլն:

Այժմ անդրադառնանք ազգանվանակերտ հիմքերի կազմությանը:

Ըստ կազմության ազգանվանակերտ հիմքերը լինում են պարզ, ածանցավոր եւ բարդություն:

1. Կազմությամբ պարզ են այն ազգանվանակերտ հիմքերը, որոնք մեկ բաղադրիչից կազմված բառակազմորեն չվերլուծվող հասարակ անուններ են, ինչպես՝ Արեւյան, Լուսինյան, Մորինյան, Ափյան, Ծովյան, Անուշյան, Բամբակյան, Խնձորյան, Ծաղիկյան, Մասուրյան, Նարինջյան, Կորեկյան, Ձավարյան, Սիսեռյան, Սխտորյան, Ցորունյան, Պտուղյան, Կաքավյան, Արծիվյան, Բազեյան եւ այլն:

Երբեմն ազգանվանակերտ հիմքը կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ հնչյունափոխվել, ստանալ հոգնակերտ եւ այլն:

Այսպես՝ Ծամեռեան եւ Խաչեւեան ազգանուններում ազգանվանական ծամ եւ խաչ հիմքերին ավելացել է -եր հոգնակերտ մասնիկը:

Ոսկուան ազգանվան ազգանվանակերտ հիմքը ենթարկվել է ի>ո հնչյունափոխության (ոսկի>ոսկո), ինչը ոսկի գոյականի այլ գործածություններում բացակայում է, քանի որ ի>ո հնչյունափոխությունը հայերենին բնորոշ չէ:

Խաչեւեան ազգանվան ազգանվանակերտ հիմքը կազմվել է ե ձայնավորի հավելումով խաչ + ե + յան: [Հնարավոր է նաեւ -եր հոգնակերտի ր բաղաձայնի անկումը. Խաչե(ր)+յան]:

2. Ածանցավոր ազգանվանակերտ հիմքերը սերում են հասարակ գոյական + -իկ, -ուկ, -ակ, -ավոր, -արան, -ական ածանց կաղապարներից: Ինչպես՝ Արեւիկեան, Տանձիկեան, Լոռիկեան, Տոնիկեան, Հայրիկեան, Պապիկեան, Թաթիկեան, Ծառուկեան, Տոնականեան, Թագավորեան, Թանգարանեան եւ այլն:

Ինչպես արդեն ասել ենք, արհեստ, զբաղմունք, պաշտոն նշող ազգանվանակերտ ածանցավոր հիմքերում ածանցն ունի «որեւէ գործով զբաղվող, ինչ-որ արհեստ ունեցող» նշանակությունը: Բերենք նման ածանցներով կազմությունների օրինակներ.

-պան -Պարտիզպանյան, Հացպանյան, Ջրաղացպանյան (Ջաղացպանյան), Դաշտապանյան,

-արար -Ներկարարյան, Լուսարարյան, Խոհարարյան,

-իչ - Ոսկերիչյան, Սափրիչյան, Քարոզիչյան,

-որդ - Որսորդյան, Խաղախորդյան (նշանակում է «կաշեգործ»),

-կան - Որսկանյան,

-ած – Տավարածյան,

-ավոր –Ճգնավորյան, Դատավորյան,

-իկ- փոքրացուցիչ, փաղաքշական ածանցով կազմված,

Ծոցիկեան ազգանունը միակն է, որ նշում է արհեստ,

Ծոց բարբառային բառն այս դեպքում նշանակում է «մանյակ», իսկ ծոցիկը՝ «մանյակագործ»:

3. Բառաբարդ ազգանվանակերտ հիմքերը հիմնականում երկբաղադրիչ են եւ սերում են գոյական + գոյական, թվական + գոյական, գոյական + ածական, գոյական + բայ կաղապարներից: Սրանք լինում են թե՛ հոդակապով եւ թե՛ անհոդակապ կազմություններ:

Գոյական + գոյական կաղապարով են կազմված Նախշքարեան, Խաչերեւեան, Սիրտերեան, Թանգարուրեան, Լուսապողեան, Խաչապողեան, Տանուտեւեան եւ այլ ազգանուններ, որոնցից Սիրտերեան (ե>ի) եւ

Տանուտերյան (ու>ա) ազգանունների առաջին բաղադրիչները հնչյունափոխված են:

Ածական + գոյական կաղապարով են կազմված Մեծատունյան, Կարմրամորուսյան, Կարմիրշալյան եւ այլ ազգանուններ:

Գոյական + բայարմատ կաղապարով են կազմված Մախտեսյան, Ճարահատյան, Մառուլերյան, Ռոմնադիրյան, Պատշարյան, Փայտահատյան, Փորհարյան, Հացթուխյան, Նավավարյան, Համտեսյան, Գրքաշարյան, Ջրքաշյան եւ այլ ազգանուններ:

Գոյական բաղադրիչն ազգանվանակերտ հիմքերում կարող է հանդես գալ երկու ձեւով՝ հնչյունափոխված եւ անհնչյունափոխ: Վերը թվարկված ազգանուններում հնչյունափոխություն է դիտվում Գրքաշարյան (ի>ը) եւ Ջրքաշյան (ու>ը) ազգանուններում: Ջրքաշյան ազգանվան հիմքը ջրքաշխ եւ ջուր քաշխող» բաղադրյալ կազմությունն է:

Գոյական + բայահիմք կաղապարով կազմություններում «արհեստավոր» իմաստով ազգանուններ է կազմում հատկապես քար բաղադրիչը, ինչպես՝ Քարակոփյան, Քարտաշյան, Քարհանյան:

Արհեստների, զբաղմունքների, պաշտոնների, պատվանունների անվանումներից ծագած ազգանվանակերտ հիմքերի կարգում հաճախ են հանդիպում մի շարք արմատներ, որոնք, ավելանալով գոյականին, ցույց են տալիս տվյալ արհեստը զբաղմունքը, պաշտոն ունեցողին: Նման կաղապարով կազմված ազգանվանակերտ հիմքերի գոյական բաղադրիչը բարդության կազմում կարող է հանդես գալ թե՛ հնչյունափոխված, թե՛ անհնչյունափոխ տարբերակով:

Հասարակ գոյական (անհնչյունափոխ) + ա հոդակապ + «գործ» կաղապարով են կազմված Խոտագործյան, Հացագործյան, Սանրագործյան, Արծաթագործյան ազգանունները:

Հասարակ գոյական (հնչյունափոխված) + ա հոդակապ + գործ» կաղապարով են կազմված Մսագործյան (ի>ը), Խեցեգործյան (ի+ա>ե), Կաշեգործյան (ի+ա>ե) ազգանունները:

Հասարակ գոյական + ա հոդակապ + «կար» կաղապարով են կազմված Մաշկակարյան անհնչյունափոխ հիմքով եւ Կոշկակարյան (ի-ի սղում) հնչյունափոխված հիմքով ազգանունները:

Հասարակ գոյական + ա հոդակապ + «պետ» կաղապարով կազմված ազգանվանական հիմքերը պաշտոնանուններ են, այսինքն ցույց են տալիս որեւէ պաշտոն, զբաղմունք ունեցողի: Այսպես՝ Ջրապետյան, Վաոժապետյան, Մաքսապետյան, Դասապետյան:

Սրանցից հնչյունափոխված բաղադրիչով կազմություն է Ջրպետեան (ու>ը) ազգանունը:

Բացարձակ թվական + ա հոդակապ + «պետ» կաղապարով են կազմված Հազարապետեան եւ Տասնապետեան ազգանունները, որոնց ազգանվանակերտ հիմքերը զինվորական պաշտոնանուններ են:

Կան մի խումբ ազգանվանակերտ հիմքեր, որոնք եկեղեցական պաշտոնանուններ կամ սպասավորների անվանումներ են, ինչպես՝ Ժամհարեան, Ժամկոչեան, Սարկավագեան, Հայրապետեան, Մայրապետեան, Աթոռակալեան, Գանձապետեան, Վեհապետեան եւ այլն:

Վերոհիշյալներից գոյական + գոյական կաղապարով են կազմված Հայրապետեան, Մայրապետեան, Գանձապետեան ազգանունների ազգանվանական հիմքը:

Գոյական + բայարմատ կաղապարով են կազմված Ժամհարեան, Ժամկոչեան, Աթոռակալեան ազգանունների ազգանվանական հիմքերը:

Ածական + գոյական կաղապարով է կազմված Վեհապետեան ազգանվան ազգանվանական հիմքը:

Այս խմբի բոլոր ազգանունները կազմվում են անհնչյունափոխ հիմքերով:

Մինչ այժմ մեր ուսումնասիրած բոլոր բաղադրյալ ազգանվանական հիմքերը երկբաղադրիչ էին, այսինքն կազմված էին երկու իմաստակիր ձեւույթներից:

Եռաբաղադրիչ բաղադրյալ հիմքով է կազմված Ջրաղացպանեան (առկա է նաեւ Ջաղացպանյան տարբերակը)՝ գոյական + գոյական + «պան» ածանց + ազգանվանակերտ ածանց կաղապարով ազգանունը:

Այսպիսով, հայերենի բոլոր ազգանունները բաղադրյալ կազմություններ են և կազմված են ազգանվանական հիմք (պարզ, ածանցավոր կամ բարդ) + ազգանվանակերտ ածանց կաղապարով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տ.Ավետիսյան, «Հայկական ազգանուն, Ե, 1987թ.
2. Տ.Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Ե, 2000թ.
3. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.ե, Ե, 1962թ.